

րուժեանն փոխեցաւ անուն նորա եւ անուանեցաւ Հեղի²²»։ Թէեւ Հեղիի քահանայական օծումը չի յիշուիր, բայց պէտք է ենթադրել, որ ոչ միայն քահանայութիւնն, այլ եւ Դրազարկի առաջնորդութիւնը արուեստաբէն, Իննովկենտիոս Գ.ի թուղթին մէջ կը կոչուի Հեղի արքայ Դրազարկի Ս. Աստուածածին վանքին (Abas S. Mariae Trium Arcium²³)։

1210ին Հեղի Լեւոնի կողմէ զեսպան ուղարկուեցաւ առ Իննովկենտիոս Գ. պապ եւ Ոթոն կայսր խնդրելու թագ Լեւոնի թոռնիկին Ռուբենի համար, զոր կ'ուզէր այն ժամանակ թագաւորը իր արքայական գահին ժառանգ ընել։ Հեթում վերադարձաւ 1211ին։

Մահը պատահած ըլլալու է ընդ մէջ 1212—1218 տարիներու, վասն զի 1219ի սկիզբը Լեւոն թագաւոր Դրազարկը յանձնեց Յովհաննէս կաթողիկոսի փոխանակ Հոսովայի, «զի Հեղի վախճանեալ էր յաւաջ» (ըստ Կիլիկիոյ պատմիչի)²⁴։

ԳՐԱՍԵՐՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԸ

Իր գրասիրութեան կը պարտինք Պատճառքը, այսինքն 1165—1179 տարիներուն Եկեղեցիներու Միութեան համար Հայոց եւ Յունաց մէջ փոխանակուած թղթակցութիւններու Հաւաքածոյքը, պատմական ծանօթութիւններով լուսարանուած։ Այս Հաւաքածոյքը կազմեց Ներսէս Լամբրոնացի խրնգրանքով իր կողմէ սերաստուած Հեթումի եւ ընդհանուր անոր (1180)։

Ան կը գոյուի իրբեւ «գրագէտ յոյժ»։ Վասն զի հմուտ էր հայերէն, յունարէն եւ լատինարէն գրական լեզուներու եւ կը սիրէր կարգաւ այդ լեզուներով իրեն մատչելի գրականութիւնը ոչ միայն ցամաքի, այլ եւ ծովու վրայ։ Ինքնին կը գրէ, թէ երբ կը կտրէր նաւագնացութեամբ միջերկրական ծովը, նաւին վրայ ունէր իր հետ գրքեր եւ կը գրադէր թարգմանութեամբ։

Հասած են մեզի իր գրչէն լատիներէնէ թարգմանուած երկու աշխատութիւններ. առնք են.

²² Պատմիչ Կիլիկիոյ, Սիսուան, էջ 83։
²³ Սիսուան, էջ 505։
²⁴ Սիսուան, էջ 83—84։ Հ. Ղ. Ալիշան կը գրէ, թէ Հեթում փոխեց «եւ գանուն իւր պանծալի եւ պոստամային ի ծերացեալն անուց Հեղի, ոչ գիտեմ որ պիտի կորչուի ընտրեալ» (Սիսուան, 505)։ Ինձ կը թուի, թէ Հեղի Հեթում անունի ծածկագրութիւնն է. այս ինքն Հե + Ղ + Ի, Ղ, 90 = 9, 9, եւ Ի, 20 = 200. Մ. ուստի Հեթ(ու)Մ.։

1. Շարադրութիւն ինքնակալացն Հոսովայեցոց, որ քարգմանեցաւ ի մերս քուակամութեան Հայոց ՈԾԹ (1210)։

Յառաջ քան զմարդանալն Տեառն մերոյ...։

Վ. Պիլիպոս եղբայր սորա եւ Աւագ ընտանի եւ հակառակ սորա ամս Դ. ի սոյն ամի սպանաւ Պիլիպոս յիշխանէ ումեմնէ եւ մնաց ինքնակալութիւն Աւագին (Ոթոն)։

Առ որ ճանապարհորդեմ ես նվաստ Հեղի՝ հրեշտակութեամբ ի թագաւորէն մերոյ Լեւոնէ առ վերոյգրել կայսր Աւագ. եւ ի վերայ ծովուս ի նաւարկութեանս մերոյ թարգմանեցի զսա ի Հոսովմէականէն ի մերս ի թու՝ Հայոց ՈԾԹ։ Իսկ արարեալ մեր ասոսս նորա ամ Ա. եւ ամ Իս Գ՝ զարձոյց զմեզ հարկաւք առ թագաւորն մեր՝ արձակելով ընդ մեզ եւ թագ արքայական բազմածախ եւ բազմազին յականց պատուականաց եւ ի մեծագին մարդարտից ընդելուզեալ. զոր բերեալ մեր մեծաւ ուրախութեամբ ընկալաւ թագաւորն մեր եւ պակեաց ընտիր պատկան զեղեցիկ զմորէն որդի դստերն եղբարն իւրոյ եւ որդի բրինձին Անտիոքոյ Ռեմզին ի թուին Հայոց ՈԿ (1211), ի տան սուրբ Աստուածածնին յաւգոստոսի ժէ. եւ թագաւորէ ընդ իւր Հայոց ի կամս Աստուծոյ»։

= Հոսով, Վատիկան, 3, 246—249 (ժԳ. Tiss. 208—209. Միւք. Գայէմք. 15—16, ՀԱ. 1892, 245/7. Չարք. Մատենագ. 647. Յովսէփեան, Յիշ. 742—743. Սիսուան, 510. հմմտ. նաեւ 83—84. Հայագ. 114։

2. Շարադրութիւն հայրապետացն Հոսովմայ, որք ի սուրբ առաքելոյցն Պետրոսէ մինչեւ ցայժմ հովիւն զաթոնն։

Յետ վերանալոյն յերկինս Տեառն մերոյ...։

Վ. Յելեստին Գ. ամ 2. եւ ամ Իս է. եւ ամ ԺԱ.։ Ինուցանց Գ. որ այժմ հովուէ։

Առ որ յառաջեալ երթամք հրեշտակութեամբ ի թագաւորէն Հայոց Լեւոնէ. ես նուստս Հեղի. որ եւ թարգմանեցի զսա եւ ի Հոսովմայականէն ի մերս, յորժամ էաք նաւարկեալ մերձ յաշխարհն Բոյլաց²⁵, որ կոչին Լունկուպարոք, յաւուր պենդակատէխ, ի յունիսոյ ի հինգն եւ ի թուականն՝ Հայոց ՈԾԹ (1210) ի փաստ Գրիստոսի Աստուծոյ որ է արհնեալ յաւիտ՝...։

²⁵ Բոյլաց աշխարհ, այն է Puglia, Apulia։

= Հոսով, Վատիկան, 3, 249—258 (Tiss. 209). Յովսէփեան, անդ, էջ 743։

Հ. Ղ. Ալիշան, Հայագաբանութիւն, Ա. 114, իր թարգմանութիւնը կը համարի Նեղոս Իոթասպատիոի վասն հինգ պատրիարքացն Իոթոսոց» գրուածքը. «յոր յարեր է եւ Կայաթերաց յիշատակ»։ Այս գրուածքին թարգմանութիւնը ձեռագիրք Ներսէս Լամբրոնացոյ գիտեն. տես Հանդ. Ամս. 1954, էջ 215—217։

Կը գրէ Հ. Ալիշան նաեւ «Ինձ անտարակոյս երեւի որ իր գրեթէ տարի եւ կէս զեսպանութեամբ ի Գերմանիա եւ ուրիշ եւրոպիոյ կողմեր տեսածն եւ ըրածն գրած է» (անդ)։ Իցի՛ւ։ Բայց նման գրութիւն մը երեւան ելած չէ դեռ։

Հ. Ն. Ա.

ԳՐԱՍԵՐՈՒԹԻՒՆ ԷՆԵ ՄԵՆԿՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

(Շարունակութիւն)։

51. ՈՒՍՈՒՑՁԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1919—1920) Թէեւ Միութիւնս 1920ի սկիզբը կը յիշուի՝ սակայն հիմնուած կը կարծենք 1919ի վերջերը³⁴։

52. ՏԱՐՈՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1920) Ժամանակի մէջ³⁵ շատ անորոշ կերպով յիշուած է Միութիւնս, որ ունի իր Լատինը։ Որքան կ'երեւայ՝ մարգալական Միութիւն մըն է։

53. ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԻՒՆ (... 1952) Ծագումը անձանօթ է մեզ այս «Սանուց Միութեան», որ թէ՛ Մարմարայի³⁶ եւ թէ՛ Պայրամի³⁷ մէջ կը յիշուի։

ԵՆՆԻՄԱՀԱԼԼԷ (ՍԿԻՒՄԱՐ)

1. ... ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1839—1840) Սկիւտարի եննիմահալէ Թաղը 1841էն առաջ ունեցած է Մշակութային Ընկերութիւն մը, իրբեւ պաշտպան եւ նպաստող թաղին մէջ 1838ին հիմնուած գիշերօթիկ

³⁴ Հմմտ. Ժամանակ, 1920, Թ. 3813։
³⁵ 1920, Թ. 3764։
³⁶ 1951, Թ. 2820։
³⁷ Կ. Պ. 1952, Թ. 2։

վարժարանին, որ կոչուած է «Ճեմարան սուրբ Երուսաղիմայ»³⁸։

Ընկերութեան յիշատակութիւնը ըրած է Իգմիլի լաւատեղեակ հայ թերթը, դժբախտաբար առանց Ընկերութեան անունը արտարարելու։ Արշալոյս Արարատեան 1841 ձեռագրելու։ Արշալոյս Արարատեան 1841 ձեռուար Յին պատմելով թէ Յակոբ Կրնիկեան Պոլսէն Լոնդոն ճամբորդած ատեն Իգմիլի հանդիպած է՝ կ'ըսէ որ Իգմիլի եղած մեր հանդիպած է՝ ուրիշ չհարկուեց Սկիւտարն մեզի ուրախ լուրեր հազարեց Սկիւտարի ճեմարանին վրայ, որ դացած այցեստարի ճեմարապետ Յովհաննէս Ամիրայի լած է ճարտարապետ Յովհաննէս Ամիրայի հետ եւ աշակերտները քննած իրենց դասերուն մէջ եւ շատ գոհ մնացած։ Այդ առթիւ Յակոբ Կրնիկեան իր գոհունակութիւնը յայտնելով ճեմարանի Ընկերութեան անդամներուն՝ ըսած է. «Ինչ որ պէտք է ձեռնարանին համար, գիրք կամ գործիք, Լոնդոն գրեւորել եւ ուղղելով իգմիլ՝ մեծ շնորհ տա գրեւորել եւ ուղղելով իգմիլ՝ մեծ շնորհ մը ինձի եղած կը սեպեմ, համարելով որ զիս մը ինձի եղած կը սեպեմ, համարելով որ զիս մը այս Ընկերութեան մէջ ընդունւած է՞»։

Տարակոյս չկայ թէ ակնարկուած Ընկերութիւնը չէր կրնար 1841ին հիմնուած ըլլալ, քանի որ լուրը Իգմիլիէն՝ 1841 Յունուար երբեքին կը տրուի Պոլսոյ համար։ Միւս կողմէ սակայն ոչ մէկ աղբիւր ունինք լուսարանի թէ ե՞րբ հիմնուած եւ ի՞նչ անուն սարանի թէ ե՞րբ հիմնուած եւ ի՞նչ անուն կը կրէր ճեմարանի պաշտպան այդ Ընկերութիւնը։ Ո՛չ 1901ի Հիւանդանոցի Տարեկան ժողովումէն⁴⁰ եւ ոչ ալ Ալպոյոյս-ճեմարանի⁴¹ ծանօթ է Ընկերութեան գոյուածութիւնը։ Ընկերութիւնս հիմնուած ըլլալու է 1839—1940ին։

2. ՄԻԱԿԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1841) Եննիմահալէի այս Ընկերութիւնը յիշուած է նախ Հայկունի⁴², ըսելով թէ Ամիրաներու կոնիներու առթիւ հիմնուած է եւ երկրորդ Ա. Ալպոյոյս-ճեմարան⁴³, որ կը գրէ. «Միակամ Ընկերութիւն (1841 Ապրիլ 13—1841 Հոկտ.) կը հիմնուի Սկիւտարի ճեմարանի անուան Յակոբիկ Մանուէլեանի նախաձեռնութեամբ, ճեմարանը փակուելէ փրկելու համար։ Շատ կարճ, հազու վեց ամիս տեւած է»։

³⁸ Աւետիս Պէրպէրեան, Պատմութիւն, էջ 267։
³⁹ Արշալոյս Արարատեան, Չմիւտեալ 1841, Թ. 15, Յունուար 3։
⁴⁰ Երեւ. Չէլէպ., Գ., էջ 44—56։
⁴¹ Գաղ. Տարեգր., Ա., էջ 52։
⁴² Մարգալան, 1912, Դ, էջ 108։
⁴³ Գաղ. Տարեգր., Ա., էջ 53։

Հնուի վերջին մեջ ակնարկութեան մը չենք հանդիպած :

3. Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԳԱՐԱՊԵՏԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1845)

Ինչպէս ծանօթ է՝ Եէնիմահալէն հինէն ի վեր ունեցած է Ս. Կարապետի եկեղեցի մը, որուն անունով կը կոչուի յաճախ թաղն ալ — Ս. Կարապետի թաղ : Արդ, 1845ին թաղը կ'ունենայ նաև Ս. Յովհաննու Կարապետի Ընկերութիւնը :

Արշ. Արարատեան 1845 Յունիս 16ին կը գրէ. «Ընկերութիւն սրբոյն Յովհաննու Կարապետի հաստատեալ յիւսկիւտար, վասն յառաջադիմութեան դպրոցին որ ի Եէնի մահալլէ ըսուած թաղն⁴⁴ : Նոյն թերթի մէջ լոյս տեսած Ընկերութեան Յայտարարութեան մէջ Ընկերութեան անունն է. Իսկիւտար Ս. Կարապետի դպրատան Ընկերութիւն⁴⁵ :

Ընկերութեան հիմնումի շարժառիթն եղած է Գրիգոր Այվազովսկի, որ 1845ի սկիզբները Պոլիս գտնուելով՝ յորդորած է Հայերը որ Եէնիմահալէի ձեմարանը վերաբանան, խոստանալով այդ ծախքին մասնակցել 100,000 դուրուչով : Այս մեծանձնութիւնը գրգռու կ'ըլլայ Պոլսեցիներուն՝ «նոր Ընկերութիւն մը բանալու⁴⁶ :

Ընկերութիւնը հիմնուած էր 1845 Հոկտեմբերէն առաջ : 1845 Հոկտ. 1ին Ընկերութիւնը Յայտարարութիւն մը կը հանէ, որմէ կ'իմանանք թէ Ընկերութեան հիմնադիրները բաւասուն աչքառու անձեր են. «... բաւասուն յարգի անձիք, կ'ըսէ Յայտարարութիւնը, մէկ տեղ գալով սուրբ Կարապետի դպրատանը անուանը Ընկերութիւն մը հաստատեցին՝ որոնցմէ ոմանք ուսումնական են, ոմանք ազգին վիճակը քաջ ճանչցող, ոմանք զանազան դպրատուններ տեսող, ոմանք չափաւոր (խորաբէլի) եւ ամէնը երկազնամիտ եւ խոհեմ, միակամ եւ միախորհուրդ ուխտ ըրեր են որ մէկ Նախակրթարան Ռուսմեարան մը հաստատելու համար որչափ որ հնար է նէ՝ անխոնջ ջանքով եւ սիրով աշխատին⁴⁷ :

Ընկերութեան նպատակն ու փափազն եղած է 1840ի ձեմարանի նման վարժարան մը բանալ : Աս այդ Ընկերութիւնը պէտք ու-

նէր 400.000 դուրուչի, զոր կը մտադրէր հաւաքել եւ ա՛յն ատեն միայն դպրոցը բանալ, երբ այդ գրամը պատրաստ ըլլայ : Կանխիկ վճարողներու գրամը պահ պիտի մնար 10 բանալի ունեցող սնտուկի մը մէջ՝ տասը Գանձապահներու յանձնուած : Իսկ կանխիկ վճարել չուզողները իրենց ստորագրութեամբ չէր մը պիտի տային Ընկերութեան, սա բովանդակութեամբ. «Ստորագրեալս պարտիմ իսկիւտարու սուրբ Կարապետի դպրատան Ընկերութեան... դուռուչ Նախակրթարան Ռուսմեարանին հաստատութեանը համար, որ պիտի հասուցանեմ (3 պայմաններով)» : Յայտարարութիւնը կը վերջանայ հետեւեալ կոչով. «Ընկերութիւնը կը յուսոյ որ բոլոր ազգը ամէն մասամբ իրեն սիրով զործակից եւ նպաստամտոյց կ'ըլլայ այս ձեռք գարկած գործքին բարեյաջողութեանը համար վարձքը ու պահը Աստուծմէ սպասելով⁴⁸ :

Չենք գիտեր թէ ինչ արդիւնք տուած է գրամահաւաքը. յաջողե՞ր է Ընկերութիւնը գործադրել իր նպատակը : — Ատկէ վերջ չի յիշուիր Ընկերութեան անունը : Ըստ Ալպոյաճեանի՝ Ընկերութիւնը բացած է դպրոցը եւ իր գոյութիւնը տեսած մինչեւ 1851⁴⁹ :

4. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԻՍՍԿԻՆՏԱՐՈՒ (1846)

Եէնիմահալէի ձեմարանը, որ քանի մը տարի առաջ փակուած էր՝ 1846 Հոկտեմբեր 1ին վերստին կը բացուի Մատթէոս Չոխաճեան Պատրիարքի ներկայութեամբ եւ մեծ հանդէսով : Այս առթիւ Իգմիւրի թերթը կ'իմացնէ որ «յատուկ Ընկերութիւն» մ'ալ հաստատուած է «Իսկիւտարի ձեմարանին հոգատարութեան համար⁵⁰ : Ընկերութեան անունը չի տար հայ ժամանակակից թերթը, բայց կը տեղեկացնէ որ ան կազմուած է 80 անդամէ : Ընկերութեան անունին կը ծանօթանանք իր Կանոնագրէն, որ հրատարակուած է 1847ին եւ կը կրէ սա խորագիրը՝ «Կանոնագրութիւն Ընկերութեան Ազգային ձեմարանի Իսկիւտարու հաստատեալ հաստատութեամբ Տեառն Մատթէոսի Ազգասէր Պատրիարքի Կոստանդնուպոլսոյ 1 Յունուար 1847 Կ. Պ.» :

Ընկերութեան հիմնումի ճշգրիտ թուա-

44 Արշ. Արարատեան, 1845, թ. 235 :
45 Անդ, թ. 249 :
46 Անդ, թ. 248 :
47 Անդ, թ. 249 :

48 Անդ :
49 Գաղ. Տարեգր., Ա., էջ 54 :
50 Արշ. Արարատեան, 1846, թ. 270, Հոկտ. 18 :

կանը յիշատակուած չենք գտներ. կրնայ ըլլալ որ ձեմարանի բացումի թուականն — 1846 Հոկտ. 1 — ըլլայ, ինչպէս կարելի է հասկնալ Արշ. Արարատեանի վերոյիշեալ տեղեկէն :

Ընկերութեան մասին կը գրէ իր Կանոնագիրը. «Վեհ սրբազան Մատթէոս Արքեպ. եւ ազգասէր Պատրիարքի բարձր հրահանալ եւ Ազգասէր գերարքի Ամիրայից մանաւր եւ Ազգասէր գերարքի Ազհուսթեամբը, որ ըսել է ընդհանուր Ազգին հաճութեամբը, հաստատուած իսկիւտարու Ազգային ձեմարանի Ընկերութեան տարու Ազգային ձեմարանի Ընկերութեան տարու Ազգային ձեմարանի համար իրմէ 34 անդամ ընտրեց եւ թրով արտօնութիւն տուաւ անոնց որ Ազգ. ձեմարանին վերաբերեալ բոլոր գործքերը ձեմարանին վերաբերեալ թրով գործքերը անոնք խորհին, անոնք տնօրինեն... այս 34 անձինքը կոչուեցան «Խորհրդական անդամք...» : Այս Խորհրդականները իրենց խորհրդակից ընկերներէն 21 հոգի պաշտօնի համար ընտրեցին... ասոնք ալ կոչուեցան «Պաշտօնատար խորհրդականք...» : Ընկերութեան անդամներէն 7 հոգի ալ սոսկ այցելութեան անդամները 40 պիտի ըլլան⁵¹ :

Ընկերութեան Կանոնագրութիւնը՝ յատուկ բաժիններով գծած է իւրաքանչիւր տուկ բաժիններով գծած է իւրաքանչիւր «պաշտօնատար»ի պարտականութիւնները : Այսպէս. Նախագահին համար 10 կանոն, Առաջնապետին համար 13 կանոն, Խորհրդականներուն համար 8 կանոն, Ներքին տեսուչներուն համար 17 կանոն, Արտաքին տեսուչներուն համար 17 կանոն, Գանձատեսուչներուն համար 7 կանոն, Ատենագրին համար 4 կանոն, Այցելուներուն համար 3 կանոն, Ընդհանուրին համար 14 կանոն :

Ընկերութեան նախագահն էր Յովհ. Հովնեան, Ատենագրիւր՝ Մկրտիչ Աղաթօն, Խորհրդականներ՝ Սահակ Փեշտիմալեան, Սիմոն Նորատուկեան, Նիկողոս Հովնեան, Եւ այլն, զանձապետներ՝ Մկրտիչ Մովսեան, Յակոբ Պրուսպեան, Գրիգոր Չափնափեան, այցելու անդամք՝ Պետրոս Խորասան-

51 Կանոնագրութիւն, էջ 3—4 :

նեան, եւն, պատուոյ անդամներ՝ Գրիգոր Աղաթօն, եւն⁵² :

Ինչպէս կը տեսնուի՝ ճիշդ թափուած է ձեմարանը երկար ատեն կանգուն պահելու համար : Դժբախտաբար կարելի չէ եղած սակայն ընկերական զօլը ամուր պահել եւ յարատեւել, որով երկար տեւած չէ նաև ձեմարանի գոյութիւնը :

5. ԳՊՐՈՑԱՍԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1858)

«Սկսնակ Բանասէր» կը գրէ. «Դպրոցներու հիմնադիր Ընկերութիւններու... անդամները կը թուի 1858ին Սկիւտար Ս. Կարապետի թաղը հաստատուած Ընկերութեանը, որուն նպատակն էր. նոր թաղի մէջ աղջկանց վարժարան մը հիմնել⁵³ :

Ինչպէս կը տեսնուի՝ «Սկսնակ Բանասէր» չի տար անունը Ընկերութեան : Թորոսեան⁵⁴ Եէնիմահալէ (Ս. Կարապետի) գտնեան⁵⁴ Եէնիմահալէ քանի մը հասարակութիւն Ընկերութիւններէն քանի մը համարի «Դպրոցներ» անոնց առաջինը կը համարի «Դպրոցներ» Ընկերութիւնը, որուն հիմնումի ժառանգը՝ Ընկերութիւնը, որուն հիմնումի ժառանգը՝ Ընկերութիւնը կարգին «Դպրոցասէր» անունի մը թիւններու կարգին հնութեան մէջ : Անունէն չենք հանդիպած հնութեան մէջ : Անունէն չենք համարիք թէ «Սկսնակ Բանասէր» յիշած 1858ի Ընկերութիւնը Թորոսեանի «Դպրոցասէր»ն է :

Ալպոյաճեան⁵⁵ Եէնիմահալէի այս անուրջ մնացած Ընկերութիւնը 1857ին հիմնուած զնելով կ'ըսէ որ «Գլխաւոր հիմնադիրն է Եղաճը Պողոս աղա» : Մասին⁵⁶ 1858 Յունիս 31ին կ'իմացնէ որ Սկիւտարի Եէնիմահալէի մէջ աղջկանց վարժարան մը բացուած է : Բնական է ներքին կապ մը ենթադրել 1858ին հիմնուած Ընկերութեան եւ աղջկանց վարժարանի բացումին միջեւ : Հաւանօրէն նոյն Ընկերութիւնն է աղջկանց վարժարանը բացողը :

6. ԱՆՁՆՈՒԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1861—1862)

Մասին մէջ շատ ուշ տրուած բացատրութենէ մը կը հետեւցնենք թէ Եէնիմահալէի այս Ընկերութիւնը հիմնուած է 1861—1862ին եւ վերակազմուած է 1865ին :

52 Ընդարձակ Տարեցոյց Ս. Փ. Ազգ. Հիւ. 1901, էջ 232 :
53 Արեւելի, 1898, թ. 3853 :
54 Երեմ. Չէլէպ., Գ., էջ 56 :
55 Գաղ. Տարեգր., Բ., էջ 79 :
56 1858, թ. 340 :

Ընկերութիւնս իր նախօրինակը ունեցած է Ղալաթիոյ 1860ի «Անճնուէր Ընկերութիւնը», որ Պոլսոյ մէջ ճիւղեր ունեցած է:

Սարգիս Կ. Չարլսեան, 1865 Սեպտեմբեր 21ին կը գրէ Մասիսին. «Խմբագիր... կը համարձակեմ քանի մը տեղեկութիւններ հաղորդել ձեզ Իւսկիւտարու մէջ նարահատատ (վերահատատ ըսել կ'ուզէ) Ընկերութեան մը նկատմամբ: Այս Ընկերութիւնը՝ գոր քանի մը երիտասարդք անուամբ հայր հասարակ ընթերցման, բերականութեան, բուսակաւութեան եւ գեղեցկագրութեան մէջ կրթելու նպատակաւ «Անճնուէր» անուամբ Իւսկիւտարու մէջ հաստատած են, Եւնիմահալէի ազգային ձեռնարանին մէջ դասարան մը ունի ուսանողաց համար, ոյք Կիրակի եւ սոն օրերը հոն կը հաւաքուին եւ որոնցմէ ազգաս եղողներուն Ընկերութեանս մեծաւորոյ անգամք թէ՛ իրենց եւ թէ՛ ուրիշ ազգասիրաց նուիրօքը եւ նրաթական նպաստիքը ճիւղապէս դասագիրք, գրիչ, թուղթ եւ մեղան կը բաշխեն: Արդարեւ Եւնիմահալէի Ս. Կարապետ եկեղեցւոյն քարոզիչ գերապատիւ եւ ազգասէր Արիստակէս Սրբազանին գեղեցիկ յորդորներէն եւ ուրիշ ծանուցման թուղթերէ գրղեալ՝ առաջ երեսնի չափ ուսանողք մեծաւ եռանդեամբ դասարան յաճախելով՝ զարմանալի յառաջիմութիւն մը ցոյց կու տային, սակայն յետոյ համահարակ ախտը (1862ի՞ քուէրան) վրայ գալով եւ հետեւաբար ումանք իրենց հայրենիքը չուելով եւ ումանք ալ նորա անողոք մանգաղին ի գոհ մատնուելով՝ ուսանողաց թիւը նուազեցաւ, եւ այժմ տասնի չափ ուսանողք մնացած են, որոց մէջ Պօլսեցի տղայք ալ կը գտնուին եւ որոց թիւը յուսալի է դարձեալ՝ որ քիչ ժամանակէն աւելնալով՝ ուսման մէջ զարգանան ի պրակ Ընկերութեանս ազնիւ նպատակին: Կողաչեմ... Խմբագիր որ բարեհաճիք ազգասիրարար սոյն նամակս ձեր ազգագուտ լրագրոյն մէկ անկիւնը գետեղել, որով Անճնուէր Ընկերութեանս քաջալեր եւ զիս շնորհապարտ կացուցած կ'ըլլաք: Սարգիս Կ. Չարլսեան⁵⁷»:

7. ԱՐԱՄԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1862)

Արամեան Ընկերութիւնը կը յիշուի 1863ի գարնան եւ ունի գրօսարան մը⁵⁸,

⁵⁷ Մասիս, 1865, թ. 708:
⁵⁸ Տէր Մեղու, 1863, էջ 139: — Պեգասեան Թոնչնիկ, 1863, թ. 10: — Սէր, 1863, էջ 52:

որմէ կը հետեւցնենք թէ հիմնուած ըլլալու է գէթ 1863էն առաջ:

Ընկերութեան Ատենապետը՝ Յ. Ն. Պ. պաշտպանելով Ընկերութիւնը չարախօսներու դէմ՝ կ'ըսէ որ «Արամեան»ը բաժնորդական եւ առեւտրական Ընկերութիւն մըն է⁵⁹:

1864ին Չէլթունցի Գրիգոր Վարդապետի Պոլսէն Ուլնիա մեկնելու առթիւ Ընկերութեան անդամները իրենց մէջ 1250 դուրու հաւաքելով՝ Ուլնիոյ Ս. Փրկիչ վանքին համար ձեռք մը եկեղեցական գգեստ կը հայթայթեն եւ յիշեալ վարդապետին կը յանձնեն⁶⁰:

Ընկերութիւնը 1865ին հաշուեցուցակ մը կը հրատարակէ, ուսկից կը տեսնուի թէ «Ընկերութիւնը Գօլջուայի առեւ կազմուած առժամանակեայ յանձնաժողովոյն ձեռամբ 11,016,10 դուր հաւաքել եւ նոյն դումարով իւր թաղի ազգաս հիւանդաց եւ կարօտ ընտանեաց պէտքերը հոգացեր է⁶¹»:

Ընկերութիւնս անձանօթ է Ալպօյաճեանի:

8. ԳՐԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1865)

Պեգասեան Թոնչնիկ թերթը 1865 Մարտին կը գրէ. «Իւսկիւտարու Եւնիմահալէի թաղի վարժարանին աշակերտները մէկ քանի օրագիր ստանալու նպատակաւ Գրասիրական անուամբ Ընկերութիւն մը կազմել են⁶²»:

Ընկերութիւնս անձանօթ է Ալպօյաճեանի: Իսկ Թորգոմեան⁶³ Ընկերութիւնս «Գրասիրաց» կոչելով՝ կը գրէ. «Գրասիրաց» որ Տերոյէնցի թարգմանած ձօյափ Բաղաբա վարուքիւնը սպազրել տուած է 1841—1843՝ Օրթագրիչի Արապեան Տպարանին մէջ. այս Ընկերութիւնը եւ նման ուրիշներ դժբախտաբար երկար կեանք չեն ունեցած»:

Սխալ է Թորգոմեանի գրածը. Տէրոյէնցի թարգմանած ձօյայի «Բաղաբա վարուքիւն»ը ո'չ թէ Եւնիմահալէի անգղոյ «Գրասիրաց» Ընկերութիւնը, այլ Պոլսոյ «Ուսումնական Ընկերութիւն Հայոց»ը սպազրած է⁶⁴:

⁵⁹ Մասիս, 1864, թ. 632:
⁶⁰ Անդ, թ. 640:
⁶¹ Պեգասեան Թոնչնիկ, 1865, էջ 292:
⁶² Անդ, թ. 31, էջ 248:
⁶³ Երեմ. Չէլչու, Գ., էջ 56:
⁶⁴ Տէր ձօյա, Բաղաբա վարուքիւն, Ա., Կ. Պ. 1842, գրքին ճակատը, որ սպազրոց Ընկերութեան անունը արձանագրուած է:

9. ԱՂԲԱՏԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1872)

Սկսնակ Բանասէր⁶⁵ Ընկերութիւնս կ'անուանէ «Աղբատաց», Թորգոմեան⁶⁶ «Աղբատասէր», մինչ ժամանակակիցներն ունին «Աղբատասիրաց» Ընկերութիւն:

Հիմնուած է 1872 Փետր. 1ին, ինչպէս կը տեսնուի հետեւեալ նամակէն.

Խմբագիր... սակէ երկու ամիս ու կես առաջ, Իւսկիւտար Նոր-Թաղի մէջ մէկ քանի ուսուցիչական եւ ուսուցիչները երիտասարդաց ջանիւքն ու առաջարկութեամբը Ընկերութիւն մը կազմուած է, որ «Աղբատասիրաց» անունը կը կրէ եւ որոյ բաժանորդաց թիւը ցարդ 120ի մօտեցած է: Սոյն Ընկերութեան նպատակն է յիշեալ թաղին վարժարանի աղբատ տղայոց ամէն տեսակ գրական պիտոյքները միանգամայն եւ անոնց գգեստուց շինութիւնը օրիպալէս հոգալ...: Խիստ բերկրալի եղաւ մեզ տեսնել սոյն Ընկերութեան առաջին արդիւնքը, այն է, այս Ս. Պետրի առթիւ 30 հաստ աղբատ եւ գրքեր մերկ տղայոց գգեստուց շինութիւնը, որուն կը փութամ իմ շնորհակալութիւն միանգամայն եւ սրտիս զգացած ուրախութիւնը յայտնել Ընկերութեան սոյն Մեծ. անդամոց, որոնք միարան սիրով ամէն ջանք ի գործ կը դնեն յօգուտ եւ յառաջարկութիւն Ընկերութեան...:

Իւսկիւտար

19 Ապրիլ 1872

Յ. Ճանֆէսեան⁶⁷:

Ընկերութեան չարաթական անդամավճարն է 20 փարա: Ընկերութիւնը իր անուամբ տոմսակներ տպած եւ ցրուած է, որմէ զոչացած գրամով եւ նուէրներով, 1872ի Չատկին, 30 տղու զգեստ շինած է, ծախսելով 4132 դուրու, կը գրէ Ընկերութեան Տնօրէն Խորհուրդի Ատենապետ՝ Յարութիւն Ս. Դուրեան⁶⁸:

10. ԽԱՅՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1874)

Մամուլ⁶⁹ երգիծաթերթը Կաղանդի առթիւ հայ թերթերունէնքներ բաշխած առեւն՝ Կիլիկիա թերթին կը նուիրէ «Խնայողական Ընկերութեան» ընկալադիրները: Այս է ար-

⁶⁵ Արեւիլ, 1898, թ. 3854:
⁶⁶ Երեմ. Չէլչու, Գ., էջ 56:
⁶⁷ Մէնս. Հավատիս, 1872, թ. 1049:
⁶⁸ Անդ, թ. 1052: — Հմմտ. Փոլս, 1872, թ. 1229:
⁶⁹ 1874, թ. 444, էջ 221, Գեղեթերեր:

զեօք Թորգոմեանէ⁷⁰ եւ Ալպօյաճեանէ⁷¹ լոկ անուամբ յիշուած Եւնիմահալէի «Մնայողական Ընկերութիւն»ը: Ասով գոնէ ճշգրտած կ'ըլլայ մօտաւորապէս հիմնուած տարին, այն է՝ 1874:

11. ՆՊԱՍԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1874)

1874ին հիմնուած է Եւնիմահալէի առաջին «Նպաստամատոյց. Ընկերութիւն»ը զիւտաւոր հիմնադիր ունեւարով Օր. Չապէլ հանձնեան: Էքսէրճեան կը գրէ 1874 թուահանին համար. «Օրիորդ Սրբուհի Աշտեան ձեռնարանի մէջ կարի եւ ձեւագիտութեան ուսուցչուհի եղած առեւ կը թերագրէ աշուսուցչուհի եղած աղբատ աղջկանց գրեկապիտոյքը հոգալու համար Նպաստական պիտոյքը հոգալու համար Նպաստամատոյց Ընկերութիւն մը կազմել եւ կը յայտնէ»: 1874ին Նպաստամատոյցի անդամուհիները.

- Օրիորդներ. Չապէլ Խանճեան
- Արտեմիս Տուտեան
- Ակիլիէնէ Լուսթեան
- Մարի Չալուքճեան
- Սաթենիկ Հաճեան
- Տիբուհի Գալֆայեան
- Վերդին Սալաուտեան
- Գարտինէ Պարսաւտեան
- Վարդանոյշ Լուսթեան⁷²

Աղջկանց այս «Նպաստամատոյց»ը կը գաղթի 1876ին, երբ իր անդամուհիները շրջանաւարտ կ'ըլլան⁷³:

12. ՊԱՐԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1878)

1877 Հոկտ. 1ին Ե. Վրայր (Եղիա Տէմիրճիպաշեան) Հայրենիքի մէջ կը գրէր թէ Գերմանիոյ Ֆրանկֆուրտ քաղաքին երեւելի Տիկիները Պարզութիւն անունով Ընկերութիւն մը կազմել են, որուն նպատակն է թիւն մը կազմել եւ կը հարցնէր թէ «Արդեօք պարզ հագուիլ եւ կը հարցնէր ալ որ մի հապիտի գտնուի՞ն հայ տիկիներ ալ որ մի համանուն եւ համանպատակ Ընկերութիւն կազմեն մի օր⁷⁴»:

Ասկէ քանի մը ամիս վերջ — հաւանօրէն 1878 Յունուարին — Սկիւտարի Եւնիմահալէի թաղի Հայ Տիկիներ, նախաձեռնութեամբ Եւփիմէ Թորգոմեանի, կը հիմնեն

⁷⁰ Անդ:
⁷¹ Գաղ. Տարեգր., էջ 123:
⁷² Հմայեակ քաւ. Էքսէրճեան, Յիւստակարան, անդ, էջ 192:
⁷³ Անդ, էջ 193:
⁷⁴ Հայրենիք, 1877, թ. 375:

«Պարզասիրաց Ընկերութիւն»ը, նպատակ ունենալով. «Նորասիրութիւնն բառնալ եւ պարզութիւնն հանրացնել»: Ընկերութեան հիմնումի մասին առաջին ծանուցումը Հայրենիքն է ընդը, որուն մէջ Յ. Շաւարշ 1878 Փետր. 18ին կը գրէ. «Իսկիւտարի մէջ մի քանի Հայ Կանայք Ընկերութիւն մը կազմած են խիստ կարեւոր եւ գովելի նպատակի մը համար, այն է՝ նորասիրութիւնն բառնալ եւ պարզութիւնն հանրացնել...: Կը փափաքինք նաեւ տեսնել Իսկիւտարու սոյն ազնիւ եւ առաքինի տիկնանց կազմած Ընկերութեան յաջողութիւնն եւ վայելած ընդունելութիւնն, զի մեծ ծառայութիւն մ'է որ կ'ընեն ընդհանուր ազգին⁷⁵»:

Ընկերութեան վարչութիւնը բաւական ուշ կ'ընէ ծանուցումը Ընկերութեան հիմնումին, հարկաւ իր պատճառներն ունենալով: Ահա թէ ի՞նչ կը գրեն. «Պարզասիրաց Ընկերութիւնը հաստատուեցաւ Իսկիւտարու մէջ բազմաթիւ հայուհեաց հաւանութեամբ: Ահա իզական սեռը լուսաւորուեցաւ վերջապէս, ունայնամտութիւնը յաղթահարուեցաւ եւ 19րդ դարուն մէջ Հայուհիք այնպիսի յաղթանակ մը կանգնեցին՝ զոր անցեալը աղաղակեց եւ չունեցաւ, իսկ ապագան պիտի օրհնէ եւ պիտի ընդունի: Ուրեմն զայս բերկրութեամբ սրտի պարտ կը համարեմք ազգարարել ըրոր Հայուհեաց եւ սուպարէզ կարգալ նոցա ի միութիւն այս գովելի նպատակին, որոյ առաջին կրկէս բացաւ տիկին Եւփիմէ Թորգոմեան ազգասիրական վսեմ խանդով եւ իւր պերճախօս շքութեամբը պարզութեան գեղեցիկ սէրը արծարծեց Հայուհի սրտերու մէջ: Ընկերութեան մասնակցիլ ուզողը պէտք է իր փափաքը յայտնէ գրաւոր առ Դիւանն Ընդհանուր Ժողովոյ եւ յէջ գայն ի տուն տիկին Եւփիմէ Թորգոմեանի Նոր Թաղ.:

Տնօրէն Ժողովոյ

- Ատենապետ
- Ա. Լուսինիեան
- Ատենապետ
- Վ. Սանճեան⁷⁶

Ընկերութիւնս անձանօթ է Ալլոյաճեանի:

Ենչիմահալլէի «Պարզասիրաց Ընկերութեան» հիմնումէն մէկուկէս տարի վերջ նոյ-

⁷⁵ Հայրենիք, 1878, թ. 409:
⁷⁶ Փուռ, 1879, թ. 1410:

նանուն Ընկերութիւն մը կը հիմնուի Սամաթիոյ մէջ, ինչպէս պիտի տեսնենք:

13. ՆՊԱՍԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879)
Հմայեակ քահ. Էքսէրճեան կը գրէ⁷⁷. «1876ին աղջկանց նպաստամատոյցէն ծնունդ կ'առնէ ձեմարանի մանչ տղայոց նպաստամատոյցը, որուն կ'անդամակցին Բարձրագոյն դասարանի աշակերտները: Իր նպատակը կ'ըլլայ ոչ միայն աղքատ աշակերտաց դպրոցական պիտոյքը հոգալ, այլ եւ տարին մէկ անգամ զգեստաւորել զանոնք եւ ցերեկեայ մաշ տալ անոնց եւ գրասեղանները շինել»: Այս նպաստամատոյցի Հիմնադրները կ'ըլլան.

- Նշան վալիտէան
- Լեւոն Շամտանճեան
- Գ. Համբարձումեան
- Կարապետ Կիւմրուզեան
- Հեթում Սէթեան
- Յակոբ Բ. Աստուածատուրեան
- Համբարձում Զարֆճեան
- Գրիգոր Աճէմեան
- Ատենապետ
- Ատենադպիր
- Գանձապետ

Ենչիմահալլէի մանչերու «Նպաստամատոյց Ընկերութիւնը» հիմնուած է 1879 Յուլիս 1ին (հ. տ.), ինչպէս կը հաղորդէ Մասիս 1879 Յուլ. 6ին, գրելով. «Գոհութեամբ կը ծանուցանեմք թէ անցեալ Կիրակի Գեր. Իզմիրլեան Սրբազանի յորդորանօքն ու նախագահութեամբ Իսկիւտարի Ենչիմահալլէի եռանդուն երիտասարդներէն մաս մ'ազգայինք ի ժողով գումարուելով նպաստամատոյց անուն Ընկերութիւն մը կազմեր են, որոյ նպատակն է յիշեալ քաղի երկիւստ վարժարանաց ուսումնական պիտոյքը մատակարարել եւ անոնց զարգացման համար հարկեղած նպաստներն ընծայել⁷⁸»:

Հայրենիք⁷⁹ կը գրէ որ Ընկերութեան անդամները «մեծաւ մասամբ ձեմարան վարժարանի վաղեմի աշակերտներէն կը բաղկանան»:

1883ին թրքախօս Հայ թերթ մը⁸⁰ կը գովէ Ընկերութեան գործունէութիւնը:

1886 Օգոստոսին Օսմանիէ թատրոնին մէջ թատերական ներկայացում մը կը տրուի «ի նպաստ Իսկիւտարու Նոր-Թաղի նպաս-

⁷⁷ Յիշատակարան, անդ, էջ 193:
⁷⁸ Մասիս, 1879, թ. 2369:
⁷⁹ 1880, թ. 622:
⁸⁰ Թերթիմանը Էփէքար, 1883, թ. 1671:

տամատոյց Ընկերութեան» եւ կ'ըսուի թէ «Նպաստամատոյց Ընկերութիւնն, հակառակ ամէն կերպ նիւթական եւ բարոյական արդեւքներու, 6—7 տարիներէ ի վեր հաւատարմար կը ծառայէ իր նպատակին, որ է գրական պիտոյք հայր-այրել աղքատիկ ուսանողաց եւ օգտակար գրքեր հրատարակել⁸¹»:

Կը տեսնուի որ Ընկերութեան նպատակը ընդարձակուած է եւ գրքեր ալ կը հրատարակէ: Չենք գիտեր թէ ի՞նչ հրատարակած է:

Ընկերութիւնը կ'ունենայ իր Կանոնադրեր: Կը տեսնենք մինչեւ 1887 եւ կը դադրէ, իսկ կը վերակազմուի 1908ին⁸²: 1909ին լայց կը վերակազմուի 1908ին⁸²: 1909ին լայց. Ժողովքին կ'ատենապետէ Լեւոն Վ. Սեմերեան, ուր կ'ընտրուի հետեւեալ Տնօրէն Խորհուրդը.

- Կարապետ Նորատունկեան
- Ստենապետ
- Յակոբ Խիւտալէրեան
- Ատենադպիր
- Թաղէտ Թէրզեան
- Գանձապետ
- Գեղամ Բէրէատէճեան
- Համարակալ
- Սեփոն Մանասեան
- Թէմէրիկ Յակոբեան
- Նշան Յովհաննէսեան

Ընկերութիւնը ժամանակ մը գործելէ վերջ՝ կը դադրէ եւ իր գոյքերը Ս. Կարապետ Եկեղեցւոյ Թաղ. Խորհուրդին կը յանձնէ⁸³: Ալլոյաճեան⁸⁴ սխալմամբ 1881ին կը գնէ Ընկերութեան հիմնումը:

14. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879?)
Թորգոմեան⁸⁵ Ենչիմահալլէի մէջ ալ «Ուսումնական Ընկերութիւն» մը յիշած է, լատ իր սովորութեան անորոշ եւ անիմաստ կերպով⁸⁶: Կը տարակուսինք այդպիսի Ընկերութեան մը գոյութեան մասին: Մեր պրպտումներու ընթացքին չենք կըրցած ստույգի անոր գոյութիւնը: Առհասարակ այս ձեւը — Ուսումնական — հարուստ է Հայ ձեւը — Ուսումնական — հարուստ է Հայ Ընկերութիւններու շարքին մէջ: Յաճախակի դործածուած ձեւն է — Ուսումնասիրաց Կա'յ «Ուսումնական» Ընկերութիւն մը

⁸¹ Հայրենիք, 1886, թ. 2088:
⁸² Ժամանակ, 1908, թ. 120:
⁸³ Էքսէրճեան, Յիշատակարան, էջ 194—195:
⁸⁴ Գաղ. Տարեգր., Գ., էջ 120:
⁸⁵ Երեմ. Չէլէպ., Գ., էջ 56:
⁸⁶ Հմտ. Ալլոյաճեան, էջ 123 «միայն անունը ծանօթ»:

— 1841էն իր ծագումը⁸⁷ — որ սակայն Սկիւտարի մէջ է հիմնուած. տարաբան Ընկերութիւն մըն է:

Կա'յ երկրորդ «Ուսումնական» Ընկերութիւն մ'ալ — յիշուած 1879ին — որուն ծագումը եւ թաղը անյայտ ըլլալէ զատ՝ Խաղաղի «Կիլիկեան» Ընկերութեան հետ միացած ձեւի մէջ եւ միայն մէկ անգամ կը յիշուի վարժապետեան Պատրիարքէն, սա ձեւով. — Կիլիկեան-Ուսումնական Ընկերութիւն⁸⁸:

Այս վերջին «Ուսումնական» Ընկերութիւնը ըլլայ գուցէ Թորգոմեանի ակնարկած Ենչիմահալլէի «Ուսումնական»ը, որ 1879ին միացած էր «Կիլիկեան»ին հետ:

15. ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1882)
Հիմնուած է 1882 Ապրիլ 1ին: Իր նպատակն է. ձեմարան վարժարանի աղքատ աշակերտներու զգեստ շինել տարին մէկ անգամ, Զատիկի առթիւ եւ անոնց գրեական պիտոյքը հոգալ⁸⁹: Իսկ ըստ Ժամանակակից պիտոյքը հոգալ «ձեմարան վարժարանի դրամական նպաստ մը յատկացնել»⁹⁰:

Արդէն 1882 Օգոստոսին սկսած է ամսէ լուծիւնը ձեմարանի յատկացուցած է ամսէ ամիս 200 դահեկան եւ Զատիկին ալ «որոշեալ թուով կարգ մը մանչ տղայոց զգեստ պիտի շինէ ի միութարութիւն նոցա թշուառ վիճակին»⁹¹:

ձեմարանի Հոգարարութիւնը երախտագիտութեամբ կը ծանուցանէ որ Բարեգործական Ընկերութիւնը Նոր Թաղի աղքատ տղոց 45 ձեռք, իսկ Սելամիէ Թաղի վարժարանի տղոց ալ 10 ձեռք զգեստ շինած է 1883ի Զատիկին առթիւ⁹²:

1885 Փետր. 10ին Ընկերութեան Գործ. Ժողովի անդամները՝ Նշան ձեմարանի (Ատենապետ) եւ Խաչիկ Ուղուրիկեան (Ատենադպիր) նամակ մը գրելով Ս. Խաչի Թաղ. Խորհուրդին՝ կը յայտնեն որ կը փափաքին Սելամիէի վարժարանի ամէնէն չքաւոր 10 տղոց զգեստ շինել Զատիկի առթիւ եւ կը խնդրեն անոնց ցանկը⁹³:

⁸⁷ Արշ. Արարատեան, 1841, թ. 26:
⁸⁸ Մասիս, 1879, թ. 2292:
⁸⁹ Էքսէրճեան, Յիշատակարան, էջ 190—191:
⁹⁰ Թերթ. Էփէքար, 1883, թ. 1671: — Հմտ. նաեւ Մանգ. Էփ. 1886, թ. 5714:
⁹¹ Անդ., թ. 1703:
⁹² Անդ., թ. 1703:
⁹³ Էքսէրճեան, անդ, էջ 190—191:

«Բարեգործական»ը 1888ին կը դադարի. կը պատրաստ դրամը — 100 սակի — կը յանձնէ Նոր Թաղի Թաղ. Խորհուրդին, որ պէս զի անոր տոկոսով ձեւարանի աղքատ աշակերտներու գրեւական պիտոյքը հոգայուի⁹⁴:

16. ՍԱՆՈՒՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1882)

Կը յիշուի 1883 Ապրիլին, բայց հիմնուած կը թուի գոնէ 1882ին, ինչպէս կը տեսնուի ձեւարանի Հոգաբարձութեան տուած սա տեղեկութեանէն. «Սանուց Ընկերութիւն թաղիս (Եջնիմահալլէ), որք վարժարանիս հարագատ սաներն են եւ որոց նպատակն է զինքեանս որդեգրող սոյն սրբագան յարկին մէջ գտնուած աղքատ ուսանողաց վերաբերեալ գրեմնիք եւ այլ գրական պիտոյքը հոգայուի գործ լիովին հոգացած են մինչեւ ցայսօր⁹⁵»:

17. ՍԱՆՈՒՆԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1882)

Ըստ Թորգոմեանի⁹⁶ Եջնիմահալլէն ունեցած է նաեւ «Սանուց Ընկերութիւն» մը: Թէեւ ժամանակակից վկայութիւն մը չունինք, սակայն հաւանական է որ ձեւարանի սանուհիներն ալ միեւնոյն ժամանակներուն կազմած ըլլան Ընկերութիւն մը՝ աղքատ աշակերտուհիներու գրեւականներն հոգայու համար:

18. ԳՈՐԾԱՆՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1910)

Կազմուած է 1910 Յունուարին: Իր կենդրոնն էր Եջնիմահալլէ: Ընկերութեան մասին կը գրէ Ժամանակ 1910 Փետրուարին. «Կ. Պոլսոյ եւ Սկիւտարի Գործաւորական Միութիւնս ներկայ տարւոյս սկիզբէն կազմուած ըլլալով, նպատակ ունի պաշտպանել գործաւորաց (գալֆա) շահերը փոխադարձ օգնութեան հիման վրայ: Այս առթիւ Միութեանս գոյութիւնը կառավարութեան կողմէ վաւերացուած ըլլալով՝ հրաւեր կ'ուղղենք Մայրաքաղաքիս բոլոր արուարձաններուն նազմանի գործաւորաց որ եթէ կը յօժարին անդամակցել՝ հաճին ներկայանալ Միութեան կեդրոնատեղին Սկիւտար Եէնի-Մահալլէ⁹⁷»:

19. ՃԵՄԱՐԱՆԻ ՄԻՈՒԹԻՒՆ (1918)

Կը յիշուի առաջին անգամ 1919 Յունուար 5ին եւ Որբերուն համար կը նուիրէ

⁹⁴ Անդ, էջ 191:
⁹⁵ Թէրն. Էփէիար, 1883, թ. 1703:
⁹⁶ Երեմ. 2էլէպ., Գ., էջ 130:
⁹⁷ Ժամանակ, 1910, թ. 413:

47 գլխարկ⁹⁸: Հիմնուած ըլլալու է 1918ի վերջերը:

20. ԿԻՆ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

Կազմուած է 1919ի գարնան, հաւաքուած տեղի ունենալով ձեւարան վարժարանը⁹⁹:

ԻՃԱՏԻԷ (Սկիւտար)

1. ՀԱՅԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1863)

Թատերական Ընկերութիւն մ'է Սկիւտարի Ինատիէ քաղին «Հայկեան Ընկերութիւն»ը, որ կազմուած է 1863ին:

Հիմնադրութեան նախաձեռնողներն են Պապայեան Եղբարք:

Ընկերութեանս մասին մեր միակ աղբիւրն է Եղիազար Մուրատեան, որ 1865 Մարտին Ժամանակ թերթին ուղղած իր մէկ նամակին մէջ ժամանակակից հայ քատրոնի վրայ խօսելով, կը հաղորդէ. «... ուրախ եմք որ Պ. Պէշիկթաշեանի խաղերը միշտ ծափահարութեամբ ընդունուած են թէ՛ Արեւելեան Թատրոնը, թէ՛ Միջագետք եւ թէ՛ այս երկուքին յաջորդ Ինատիէի մէջ ներկայացուած ատենները: Այս վերջինը իր փոքր վիճակին մէջ նպատակին հասաւ, շնորհիւ Հայկեան Ընկերութեան (Պապայեան աղնուազարմ պարոնայց եւ ընկերաց): Այս աղնուական երիտասարդներ քաղին վիճակը եւ դպրոցին պէտքերը նկատելով՝ երկու տարիէ ի վեր յաջողութեամբ կը ներկայացնեն այլեւայլ թատերգութիւններ եւ ազգային խաղեր, զոր Պ. Պէշիկթաշեան աննախաձեռնու տայ իրենց...: Երկու հազուագիւտ են Հայկեան Ընկերութեան անդամ պարոնայց նման ազգային ոգի, անշահատէր սիրտ եւ ազնիւ ու վառվառն բնավորութիւն ունեցող երիտասարդներ¹⁰⁰»:

Ընկերութիւնս անձանօթ է Թորգոմեանի եւ Ալպոյաճեանի:

2. ԼՈՒՍԱՆՈՐՉԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1863—1864)

Ինատիէ ունեցած է «Լուսաւորչեան Ընկերութիւն» մը, որուն համար 1866ին կ'ըսուի թէ «շատոնց ի վեր խափանուած էր»: Ե՞րբ հիմնուած էր, ուրեմն: Ճշգրիտ մասնաւոր կողման մը չունինք: Մօտաւոր թուական մը կրնանք նշանակել 1863—1864 տարիները:

⁹⁸ Անդ, 1919, թ. 3419:
⁹⁹ Հակոտումարտ, 1919, թ. 122:
¹⁰⁰ Ժամանակ, Հանդէս Հայրենագուէր, 4. 1865, էջ 55:

ՀԱՅՏԱՐ ՓԱՇՍ

1. ԱՆԱՏՈՂՈՒԻ ՕՍՄ. ԵՐԿԱՌՈՒՂԻՈՅ ՀԱՅ ՊԱՇՏՈՆԵՑ 1888 ԱԶԳՕԳՈՒՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1908)

Հիմնուած է 1908 Հոկտ. 25ին: Ունի իր Կանոնադրը, բաղկացած 37 Յօդուածներէ, ստուած Պոլիս 1909ին:

Միութեան նպատակն է. «Ա. Նիւթապէս օգնել Հայաստանի ընդհանուր սովեակներու, որչափ ատեն որ կարելի կայ, եւ կարօտեալներու: Բ. Ազգագետնի հանդամանքը արդարացնող Բարեսիրական կամ կրթական ձեռնարկներ յաջողութեամբ գլուխ հանելու հանար նիւթական եւ բարոյական որեւէ օժանդակութիւն եւ ջանք չինայել: Գ. Երկրագործական օգտակար եւ նորագոյն գիտելիքներով մշակել Անատոլիոյ Հայ հողագործին միտքը, կարող ընծայելով զայն գիտութեան պահանջներուն համաձայն ընթանալու¹»:

Միութիւնը կազմուած էր Անատոլիոյ Օսմ. Երկաթ. վարչութեան մէջ, ինչպէս նաեւ Ընկերութեան բոլոր գիծերուն վրայ գտնուող ամբողջ Հայ պաշտօնէութեան անդամակցութեամբ:

Միութեան կենդրոնը կը գտնուէր Հայտար ֆաշա՝ մասնաճիւղեր ունենալով Իգմար, Մոտիազար, Պիլէճիկ, Իսկիլէճիկ, միւր, Ատախազար, Պիլէճիկ, Իսկիլէճիկ, Անկիլիս, Աֆիոնգարահիսար, Գոնիա եւ Պուլիսը:

Անդամներէն ամսավար կը գանձուէր 5, 10, 15 եւ 20 դրու: Միութեան վարչութիւնը յանձնուած էր Ընդհ. Ժողովին ընտրուած Տնօրէն Խորհուրդի մը, իսկ Համարուած Տնօրէն կը կազմուէր Ընդհ. Ժողովին եւ Տնօրէն Խորհուրդին ըրած խառն նիստէն²:

Միութեան վարչութիւնը կազմուած էր 1910—1911ին հետեւեալ ձևով.

Կենդրոնական Դիւան

Նախագահ՝ Ատենապետ Դեր-Ատենապետ	Անտոն Թարազ Յարութիւն Ոսկեան
Մտնադպր Գանձապետ	Գէորգ Քէրէսթէճեան Լեւոն Պապոյեան
Հաշուակալ Քարտուղար	Կարապետ Աղասի Ներսէս Ալլաճիբաթիոյ շրանտ Թէրզեան

Խորհրդակից անդամներն էին. Գրիգոր Ասլանեան, Գրիգոր Ալլապեան, Եղուարդ

¹ Կանոնադր, Կ. Պ. 1909, էջ 3—4:
² Անդ, էջ 5—6:

բայց հաւանական է որ աւելի հին ըլլայ:

1866ի ամբան կը վերակազմուի եւ կ'ըսուի թէ թաղին մանչերու դպրոցին պիտի ստարէ¹⁰¹:

Ընկերութիւնս անյիշատակ մնացած է Թորգոմեանի եւ Ալպոյաճեանի քով:

3. ՏԻԿԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1866)

Հիմնուած է 1866 Ապրիլ-Մայիսին: Հայ թերթ մը կու տայ հետեւեալ ծանօթութիւնը. «Իսկիւտարի Ինատիէի Թաղի երկուսն զըսորոցը վերջին ժամանակներս գրեթէ ապարդիւն վիճակի մը մէջ կը գտնուէր... Թաղին Տիկնայք բարեհաւեր են մասն ունեալ դպրոցին յառաջադիմութեան գործոյ մէջ: Յ. Այվազեան, Մ. Չարխեան եւ Կ. Օտեան ազնուուհի Տիկնայք հրաւեր կարդալով թաղին տիկիներուն, յաջողեալ են Ընկերութիւն մը կազմել եւ իրենց բաւականութեամբ չափ ջանալ աղջկանց դպրոցին յառաջադիմութեան համար խնամ տանելով եւ կարեւոր պիտոյքը հայքայքելով¹⁰²»:

Մասին մէջ¹⁰³ վաղարշ կը գովէ Ինատիէի «Տիկնայք Ընկերութեան» անդամուհիներն, «որք ուրիշներէ ետ մնալ չուզելով իրենց քաղին աղջկանց ուսումնարանը բարեկարգելու ձեռք գարկեր են: Թո՛ղ իրենց հետեւողներն ու ձեռնուները շատնան, ո՞վ կրնայ բնի այն ատեն քէ հայերն ալ ապագայ մը չունին»:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1881—1882)

Մասին¹⁰⁴ 1883 Մարտ 7ին կը գրէ. «Կը լսենք թէ Իսկիւտարու Ինատիէի դպրոցին հոգաբարձութիւնն ինչ ինչ պատճառներով հրաժարած է եւ դպրոցն անկերպարան վիճակ մ'ունենալուն, տեղոյն Հայկազեան Ուսումնասիրաց Ընկերութեան Գործադիր Ժողովը նկատողութեան առեր է այս վիճակը եւ երէկուրնէ սկսեալ իւր հսկողութեան տակ առեր է, մինչեւ որ Ազգային Իշխանութեան կողմէ տնօրէնութիւն մը լինի»:

Մեզ կը թուի թէ Ընկերութեանս հիմնումը ո՛չ թէ 1883ին, այլ 1881—1882ին եղած համարելու ենք:

Ընկերութիւնս անձանօթ եղած է թէ՛ Թորգոմեանի եւ թէ՛ Ալպոյաճեանի:

¹⁰¹ Փոստ, 1866, թ. 124:
¹⁰² Փոստ, 1866, թ. 124, Յունիս:
¹⁰³ 1866, թ. 744:
¹⁰⁴ 1883, թ. 3425:

16. ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1918)

Հիմնուած է 1918 Հոկտ.ին: Նոյեմբերին սկիզբը Միութիւնը իր Բ. Ընդհ. Ժողովին մէջ կը վաւերացնէ իր Կանոնադրը եւ կ'ընտրէ վարչութիւնը⁴²:

17. ԿՐԹԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1918)

1918ի զինադադարէն վերջ Գաղափարը մէջ ա՛յլ եւս չենք հանդիպել «Հայ Տիկնանց Կրթասիրաց Միութեան»: այս ան «Կրթասիրաց Միութեան» զինադադարէն վերջ ա՛յլ չենք հանդիպել: Յայտնի կը տեսնուի թէ պատերազմէն վերջ փոփոխութիւն մը տեղի ունեցած է. «Կրթասիրաց» տիրոջը պահելով՝ Միութիւնը վերածուած է երկսեռի եւ կամ «Տիկնանց»ը դադարած է:

1919 Յունուարին Միութիւնը ներկայացում կու տայ, որուն հասցիին կէսը Հասարակ սովետներուն, իսկ միւս կէսը Հասարակ-Ընթերցարան մը բանալու յատկացուած է⁴³: Կը բանայ անդիլերէնի եւ Փրանսերէնի դասընթացք մը⁴⁴: Աւելի վերջ կ'ուսնայ նաեւ մեքենագրութեան եւ տոմարակալութեան դասընթացքներ⁴⁵:

1919 Դեկտ.ին Միութեան վարչ. Ոորհուրդը կը կազմէին հետեւեալները.

- Հրաչեայ Տէրոսկի
- Յ. Տէրունի
- Յ. Արսրան
- Ն. Գամէր
- Հ. Տատեան
- Լ. Թիւթիւնճեան
- Օր. Ա. Ֆէրհատեան⁴⁶

18. ՈՐԲԱՆՆԱՄ (1918)

Կազմուած է 1918ի վերջը: Ահա իր առաջին վարչութիւնը.

- Ն. Օհանեան
- Տօթթ. Մ. Արզարեան
- Ս. Թէրճեմանեան
- Ա. Մայրասեան
- Ե. Ն. Կտուրեան
- Վ. Չէլիթունցեան
- Տօթթ. Ս. Շիմշիբեան
- Լ. Ռ. Սէմէրճեան
- Պ. Գալուզճեան
- Ա. Ատենապետ
- Բ. Ատենապետ
- Ա. Ատենապետ
- Բ. Ատենապետ
- Գանձապետ
- Համարակալ

⁴² Ժամանակ, 1918, Թ. 3360:
⁴³ Անդ, 1919, Թ. 3427:
⁴⁴ Անդ, Թ. 3670:
⁴⁵ Անդ, Թ. 3698:
⁴⁶ Անդ:

Հ. Արզարեան
Յ. Նազդաշեան⁴⁷

Որբանամը սկիզբէն կը ստանձնէ 100 որբերու խնամքը: Շէնք կը տրամադրեն Եռուսեփեան Եղարքը: 1921ին 4500 ոսկի ծախք ընելով՝ Ունճեան վարժարանի վրայ նոր յարկ մը կը բարձրացնէ, ուր կը փոխադրուին թաղին բոլոր որբերը⁴⁸:

19. ԱՍՏԻՆԱՆԻ ԿՐԹԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

Առաջին յիշատակութեան հանդիպում կնք 1919 Ապրիլին: Ժամանակ⁴⁹ կը գրէ որ «Գաղափարը Ազատ Հասարակական Միութիւնը գեղեցիկան դասախօսութիւններու ընթացք մը հաստատած է անդիլերէնի եւ Փրանսերէնի»:

Թէոփէկէ քով⁵⁰ րկ Միութեանն անունը յիշուած է:

20. ԹԱՏԵՐԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1919)

Կը յիշուի 1919 Մայիսի սկիզբը, ծանուցումի մը մէջ⁵¹: Հաւանական է որ հիմնուած ըլլայ 1919ի սկիզբը:

21. «ԳՈՂԹԱՆ» ԳԵՂԱՑՈՒԵՏԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

Հիմնուած կ'երեւայ 1919ի դարնան: Կը գործէ 1919 Մայիսին⁵², եւ նոյն տարու մէջ Հոկտեմբերին կը վերակազմուի⁵³:

22. ՈՐԲԱՍԻՐ ՄԱՆԿԱՆՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1920)

Հայ Կաթողիկէ Անարատ Յղութեան Գորբերու Գաղափարը վարժարանի տեսչութեան նախաձեռնութեամբ կազմուած է այս Միութիւնը: Ժամանակակից թերթը կը տեղեկաբերէ. «Գաղափարը «Բերց Անարատ Յղութեան» վարժարանին նախաձեռնութեամբ կազմուած է «Որբասիւր Մանկանց Միութիւն» մը, որուն նպատակն է քաղին որբերուն պտուղ, անուշեղէն, շոգոյսք եւ այլն հայրապետ: Ատենապետուհին է Գոյր Թէոպիստէ, որուն կ'օժանդակեն Օրթ. Անգիլիէ Տէրոսկի, Նուարդ Մազմանեան, Լիւսի Նահապետեան, Ռոզիկ Պարոնեան, Եւգիլիէ Պա-

⁴⁷ Ժամանակ, 1919, Թ. 3419:
⁴⁸ Ժողովուրդի Չայնը, Կ. Պ. 1921, Թ. 735:
⁴⁹ 1919, Թ. 3498:
⁵⁰ Ամէնուն Տարեցոյցը, 1921, էջ 307:
⁵¹ Հակատարտ, Կ. Պ. 1919, Թ. 144:
⁵² Ժամանակ, 1919, Թ. 3520:
⁵³ Անդ, Թ. 3659:

տուհասեան եւ Անահիտ Պողոսեան: Միութեան կ'անդամակցին 100ի մօտ պղտիկ օրիւորներ, որոնք ամէն շաբաթ իրենց պտուղի դրամէն խնայած գումարը կը տրամադրեն նոյն քաղին բաղադարի որբուկներուն: Յաջողութիւն կը մաղթենք եւ կը յուսանք որ ուրիշ թաղերու մէջ ալ անոնցմէ բարի օրինակ առնելով պիտի կազմուին նմանորինակ Միութիւններ⁵⁴:

23. «ԵՌԵՎԱՆ» ՄԻՈՒԹԻՒՆ (1920)

Ժողովուրդի Չայնը ունի հետեւեալ տողերը⁵⁵. «Գաղափարը Երեւան Միութեան Կանոնադրը Բազ. Ժողովը վերադարձուցեր է Թաղ. Սորհուրդին, որպէս զի երբեք թաղային մարմին վաւերացուի»: Թերթին այս հակերճ ծանուցումէն ի՞նչ կարելի է խմանալ Միութեան բնոյթի մասին: Գուցէ այն թէ իզական Ընկերութիւն մ'է ան:

Ուրիշ տեղէ լուսարանութիւն մը չենք զտնած:

24. «ՏԱԻՐՈՍ» ՏԻԿՆԱՆՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1920)

Հայ թերթը կը գրէ 1920 Սեպտեմբերին. «Տարոս Տիկնանց Միութիւնը, որ կազմուած է Գաղափարի մէջ, ազգ. իշխանութեան վաւերացումով մեղ զրկուած է կոչ մը, որով կ'ըսէ թէ իր նպատակն է տալ դաստիարակութիւն եւ ուսում գաւառացի խոտիարակութիւն եւ ուսում գաւառացի խոտիարակութիւն: հայրապետի անունը սըմնալից աղջիկներու. հայրապետի կրթութիւն, որպէս զի երբեք մայր հայրենիք տալիս, որպէս զի երբեք մայր հայրենիք տալիս, որպէս զի երբեք մայր հայրենիք տալիս, որպէս զի երբեք մայր հայրենիք տալիս»:

Միութիւնը 480 կտոր ճերմակեղէն կը պատրաստէ Հայ զինուորին համար, սակայն պատշաճ կը տեսնէ զանոնք յանձնել Պատուարքարանին՝ յարմար կարգադրութիւն մ'ընելու համար⁵⁷:

25. ԲԱՐՈՑԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1921)

Հայ Բողոքական Ընկերութիւն մըն է նպատակ ունենալով բանախօսութեանց միջոցաւ ընդհանուր բարոյական սկզբունքներ յիշեցնել եւ գործադրել տալ⁵⁸:

⁵⁴ Ժամանակ, 1920, Թ. 3810:
⁵⁵ 1920, Թ. 563:
⁵⁶ Ժողովուրդի Չայնը, 1920, Թ. 595:
⁵⁷ Ժողովուրդի Չայնը, 1921, Թ. 735:
⁵⁸ Հ.մ.մ. Ժողովուրդի Չայնը, 1921, Թ. 889 եւ 1922, Թ. 1083:

26. ԱՐԱՄԵԱՆ ՍԱՆՈՒՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1922)

Գաղափարը Արամեան վարժարանը, հակառակ իր բարձր հնութեան, հին ժամանակները չէ ունեցած «Սանուց» մը: «Արամեան Սանուց Միութիւն»ը հազիւ 1922ին կը կազմուի⁵⁹, եւ կը տեւէ մինչեւ օրս⁶⁰:

ԳԱՐԹԱԼ

1. ՀԱՅ ԱՍՏԻՆԱՆԻ ԿՐԹԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

Պրէն Չարգարեանի կազմած գանձիկէ համկոմսո⁶¹ «Հայ Ատանաբուժական Միութեան» հիմնումի նախաձեռնարկ եղած է Գարթալի մէջ: Մեզի ծանօթ աղբիւրները նոյն Միութեան ժողովատեղի ցոյց կու տան Բերան: Կը թուի թէ Միութիւնը Գարթալ հիմնուած, բայց իր կենդանու տեղ՝ Բերան հիմնուած է հաստատուելով: Հիմնուած է 1919 եղած է հաստատուելով: Միութեան նախաձեռնարկ եղած էն:

- Դոկտ. Նասիպ Ալիբեան
- Դոկտ. Մ. Վ. Գալֆայեան
- Դոկտ. Վ. Մ. Հինդլեան
- Դոկտ. Լ. Թէրզեան
- Դոկտ. Ա. Հանչէրեան
- Դոկտ. Օ. Աշճեան⁶²

Միութեան առժամեայ Դիւանը կազմած էն. Դոկտ. Լ. Թէրզեան՝ Ատենապետ, Դոկտ. Եղ. Ճիգմէճեան՝ Ատենադպր⁶³:

1920ին Միութիւնը բոլոր Պոլսոյ Որբանոցներու, Հայ Կարմիր Ուսուցիչ եւ ուրիշ ազգ. կարեւորագոյն հաստատութիւններու մէջ առաջնորդական ձրի սպասարկութիւն մը կը հաստատէ իր անդամներով⁶⁴:

1921ին Միութիւնը «Հայ Բժշկական» եւ «Գեղագործական» Միութիւններու հետ Գարթալ-Հայ-Բուժակ անունով պարբերաբար կը հրատարակէ⁶⁵: 1922ին լոյս հանած է առանձին Ատանաբուժ, 1—2 թիւ միայն:

2. «ԱՐԱՐԱՏ» ԵՐԻՏԱՍԱՐԳԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

Կը յիշուի 1919 ամբան: Երեկոյթ կու տայ «ի նպատակ տեղւոյն կիսաբանող ազգ.

⁵⁹ Անդ, 1922, Թ. 1170:
⁶⁰ Նոր Լուր, Կ. Պ. 1952, Թ. 778 եւ Երջանիկ Տարեցոյց, Կ. Պ. 1953, էջ 12:
⁶¹ Թէոփէկ, Ամէն. Տ. 1921, էջ 308:
⁶² Ժամանակ, 1919, Թ. 3425:
⁶³ Անդ, Թ. 3432:
⁶⁴ Ժողովուրդի Չայնը, 1920, Թ. 568:
⁶⁵ Անդ, 1921, Թ. 746:

վարժարանին⁶⁶: 1921ին ունէր 30 անդամ: Վարչութիւնը կը կազմէին. Գ. Գարագաշեան, Օ. Թիֆլիզեան, Մ. Գասպարեան, Լ. Իփլիբաճեան, Ն. Եայրապետեան, Ռ. Եայրապետեան⁶⁷:

ԳՆԱԼԸ ԿՂԶԻ (Հայ Կղզի)

1. ՆԵՐՍԻՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1867)

Հիմնուած է 1867 Նոյ. 1ին: Ունեցած է իր Կանոնադրութիւնը, 24 յօդուած է բաղկացած, ինչպէս կը գրէ Յառաջ: Կու տանք Ա. և Բ. յօդուածները, քաղելով նոյն թերթէն. «1. Ընկերութեան նպատակն է Գիւղիս Ազգային դպրոցին քէ՛ նիւթապէս եւ քէ՛ բարոյապէս ըստ կարի նպաստել, այսինքն Մանչ աղայոց ուսման ստիպելով եւ համար արձեղան դասատուաց ծախսին հոգալ՝ իրեն վերաբերած յատուկ պէտքերովը, եւ Ազգական սեռին ալ Գաստիարակ կամ Վարժուի մը յատկացրելով, անոնց ալ ըստ բաւականին կարողալ, գրել եւ ազնեգործութիւն սորվեցնել է.

2. Ընկերութիւնս՝ բաժանորդագրութեամբ է եւ կրկին սեռի ամեն ազգային անհատ կրնան բաժանորդ գրուիլ, ուզածուն չափ բաժին առնելով⁶⁸»:

Մանգումէէն կ'իմանանք թէ Գնալը կղզիէ ազգ. վարժարանի պաշտպան «Ներսէսեան Ընկերութիւնը» կղզիին վրայ քարաշէն կալուած մը ունէր 1871ին⁶⁹: Ըստ Ալպոյաճեանի⁷⁰ Ընկերութիւնը դպրոցին համար քանի մը կարուածներ չինած է եւ իր գլխաւոր անդամն եղած է Շալմը Մանաս, հայ կաթողիկէ մը:

Գնալը կղզիի ազգ. վարժարանի հիմնադրուած մինչեւ 1850 կը բարձրանայ: Անունն է Ներսիսեան վարժարան: Վարժարանի անունով կոչուած է հետեւաբար իր պաշտպան Ընկերութիւնը եւ հաւանական է ենթադրել թէ վերջոյս հիմնադիրներն ալ նախկին աշակերտներ եղած ըլլան:

2. «ՍԵՒԱՆ» ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1918)

Կազմուած է 1918 Յունուարին: Իր նպատակն է. «Բարձրացնել Հայ Կղզիի Հայութեան բարոյական, կրթական եւ

ընկերական մակարդակը⁷¹»: 1921ին ունէր 30 անդամ: Վարչ. Խորհուրդը կը կազմէին. Գարեգին Խոսրովեան (Ատենապետ), Ն. Բիւրքաճեան, Օր. Արքեան, Օր. Է. Ասատուր, Օր. Ե. Սիրաքեան, Մ. Պիւլպիւրճեան, Կ. Հաճեան⁷²:

3. ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

Համազգային այս Միութիւնը հիմնուած է 1919ի սկիզբը: Փետրուարին հանդէս մը կը սարքէ երգով, նուազով, աճուրդով եւ վիճակահանութեամբ⁷³: Կանոնադրը կը հաստատուի 1919 Ապրիլին⁷⁴: Միութիւնը 600 ոսկի կը նուիրէ Կարմիր Պաշտին, Տարագրեալներուն, Որբոսնամին եւ Կովկասի սովեալներուն⁷⁵:

Ահա իր Գործ. Ժողովի կազմը.

Մատթէոս Էպիսկոպոսեան	Ատենապետ
Լեւոն Տէմիրճիպաշեան	Դեր-Ատենապետ
Դաւիթ Արազեան	Ատենապետ
Հայկ Երամեան	Գանձապահ
	Համարակալ

Մկրտիչ Մանուկեան
Գամէր Փիլիպոսեան
Երուանդ Գարայեան⁷⁶

Միութեան նախագահ եղած է Մեծ կղզիի Կաթ. Հայոց Մեծաւոր՝ Ծամճեան վարդապետ⁷⁷:

ԹՈՓ ՀԱՆԷ

1. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1872)

Կազմուած կ'երեւայ 1872 Յունիսին: Իր նպատակի մասին ծանօթութիւն մը չունինք: Թէեւ կ'ըսուի թէ ունեցած է իր Կանոնադրը, չենք տեսած տեղ մը հրատարակուած: 1872 Սեպտ.ին Ընկերութեան Եռամսեայի առթիւ ժողովքի կը հրաւիրէ Ընկերութեան Ատենապետը՝ Փ. Գ. Քէշիշեան ծանուցումի մը մէջ (Մանգ. Էֆ. 1872, թ. 2008: — Փող, 1872, թ. 85: — Օրագիր, 1872, թ. 756):

Անունս անձանօթ է Ալպոյաճեանի:

71 Ամէնուն Տարեց. 1921, էջ 304:
72 Անդ:
73 Ժամանակ, 1919, թ. 3454:
74 Անդ, թ. 3489:
75 Անդ, 3501:
76 Անդ, թ. 3483:
77 Անդ, 1920, թ. 3782:

66 Ժամանակ, 1919, թ. 3611:
67 Թէոզիկ, Ամէն. Տարեց. 1922, էջ 371:
68 Յառաջ, Փարիզ 1953, թ. 7196:
69 Մանգումէի Էֆէնար, 1871, թ. 1799:
70 Գաղ. Տարեգր., Բ., էջ 87—88:

ԷԹ—ՄԷՅՏԱՆ

1. ՎԱՐՃԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1878)

Հիմնուած է 1878ին: 40—45 տունէ բաղկացած հայկ. փոքրիկ թաղը չունենալով դպրոց՝ թաղեցիները խորհած են ճիշդ մը ընել. հիմնուած է Ընկերութիւնս իր օժանդակ մը. 1879ին կը յաջողին բանալ «Ընտելարան» մը. փոքրիկ դպրոցը մի կերպ կը պահուի մինչեւ 1881:

1881ին Ընկերութիւնը կոչով մը դիմում կ'ընէ Պոլսոյ Հայութեան՝ խնդրելով որ իր գանձանակը անտես չընեն՝ ապահովելու համար 40 մանուկներու կրթութիւնը. «...քաղցիքս ըստ կարի քաղային ընտելարանի մը ձեռնարկած եւ Ընկերութիւնս նորա նիւթապէսին օժանդակ կացացած էր... թաղիս աղքատութիւնը եւ փամանակիս նեղութիւնը վրայէ վրայ դաժանութեան մանկտին թշուառով՝ 40ի չափ մատաղ մանկտին թշուառ կացութեան մէջ է... Ուստի կը փութամք հանուցանել արդոյ հասարակութեան որ առատասիրտ ազգայնոց օժանդակութեանը մնալով՝ կը յուսամք թէ յանուն վարժարանիս իրենց դիմող գանձանակէն պիտի չխնայեն իրենց լուծայն...»

Ի դիմաց վարժարանական Ընկերութեան Ատենապետ

Գրեգոր Մովսէսեան (Թէրն. Էֆէիար, 1881, թ. 1161: — Հմմտ. Մանգ. Էֆէիար, 1881, թ. 4672):

ԳԱՍԸՄ ՓԱՇԱ

1. ... ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1856)

Գասըմ փաշայի Ս. Յակոբ եկեղեցին նորոգութեան պէտք ունէր. 1855ին ձեռք կը զարնուի նորոգութեան աշխատանքներու. դրամը կը սպառի. 1856ին «քանի մը բարեպաշտ եւ յարգի անձինք ամենապ. Ս. Պատրիարք Հօր յորդորանօքը Ընկերութիւն մը կազմելով՝ սկսան դրամ հաւաքել եկեղեցւոյն շինութիւնը աւարտելու համար եւ արդէն քանի մը աւուր մէջ 38.190 զուռուչ՝ հաւաքեցին¹»:

Ընկերութեան անունը չենք գտած տեղ մը: Ալպոյաճեանի անձանօթ է Ընկերութիւնս:

1 Մասիս, 1856, թ. 233, Յուլ. 11:

2. ՆՈՒՐԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1869)

Հիմնուած կ'երեւայ 1869ի Դեկտեմբերին: Մանուկ Կ. Չիլիկիերեան Գասըմ փաշայէն կը գրէ Պոլսոյ Մանգումէին 1870 Յունիս 9ին. «Թաղեցիք... դպրոցի բարեկարգութեանը վրայ երբեք խորհած չունէին եւ հետեւաբար դպրոցը խիստ թշուառ վիճակի մը մէջ կը գտնուէր... մէկ քանի ուսումնասէր երիտասարդներ... մանկտեաց թշուառ վիճակին վրայ զթալով՝ նուիրասիրաց անուն Ընկերութիւն մը կազմեցին, անոնց ուսման եւ դաստիարակութեան հոգը քէ՛ բարոյապէս եւ քէ՛ նիւթապէս ստանձնելու նպատակաւ: Սակայն փոքր սո՛ս որ վեց ամիսէ ի վեր դեռ գործ մը արտարեամ չէ. պատճառն — վասն զի հազիւ կըցած է 45—50 բաժանորդ գտնել եւ որոնց մէջէն 25ը թաղեցի են²...»:

3. ՊԱՐՈՅՐԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1870)

Ալպոյաճեան կը գրէ. «Պարոյրեան Ընկերութիւն (1870) կը կազմուի Գասըմփաշայի դպրոցին ի նպաստ³»:

4. ԴՊՐԱՅ ԳԱՍ (... 1918)

Անձանօթ են հիմնումի պարագաները: Կը յիշուի 1918ին⁴:

5. ԱՂՔԱՏԱՆԱՍ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (... 1918)

Ս. Յակոբայ տօնին առթիւ Գաբաց դպար եւ Աղքատախնամ Մարմինը 2000 զուռուչ կը հաւաքեն եւ Որբախնամին կը յանձնեն⁵:

ԵԱՍԳԻԻՂ

1. ՆԵՐՍԻՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1843)

Ս. Ներսէս Շնորհալույ անունով եւ պաշտպանութեան տակ հիմնուած է Խաղիկի առաջին Ընկերութիւնը, որ նպատակ ունէր քաղիկի ազգային վարժարանի մակարդակը բարձրացնել իր նախկին աստիճանին: Պատգուլ արդէն 1836էն ի վեր ունէր Ս. Ներսիսեան անունով վարժարան մը⁶, որուն պաշտպան կը հանդիսանայ համուն «Ներսիսեան Ընկերութիւնը»:

2 Մանգումէի Էֆէնար, 1870, թ. 1262:
3 Գաղութայ Տարեգրք, Բ., էջ 89:
4 Ժամանակ, 1918, թ. 403:
5 Անդ:
6 Տօքթ. Վահրամ Յ. Թորոզեան, Երեմիա 2է—1է պիտի Բէժմիւրճեան, եւ այլն, Բ., էջ 437:

Ընկերութեան ջանքերով վարժարանը այնքան կը յառաջդիմէ որ ժամանակակից թերթը զօհոնակութեամբ կը գրէ 1845ին. «...մտերիմ չնորհակալութիւն կը պարտաւորիմք անշուշտ ներսիսի Շնորհալոյ պաշտպանութեամբը յիշեալ գեղին (Սաւ-բէօյ) մէջ հաստատուած Ընկերութեանը, որուն ջանքովը յայս աստիճան բարեկարգութեան հասաւ այն տեղի ուսումնարանը, որնոր արդէն մեծ ակնկալութիւններ կու տայ ազգիս. քանզի Ընկերութեան հոգաբարձուները գրեթէ ամէնքն ալ ուսումնական եւ ազգասէր անձինք են, որոնց մէջ մասնաւոր նշանակութեան արժանի է մեծիմաստ պրուսացի պատուելի Յօհաննէս վարժապետին անխնայ խնամատարութիւնը»:

Ընկերութեան հիմնադիրներն եղած են ներսիսեան վարժարանի նախկին աշակերտները⁸: Յակոնէ կը յիշուի Նիկոլոս Հովսեփեան, մեռած 1858ին⁹:

Ներսիսեան Ընկերութիւնը 1853ի սկիզբը վերակազմուած՝ նոր եռանդով ու ծրագրով գործի կը ընդունի ներսիսեան վարժարանի բարձրացումին համար: Ընկերութիւնը 1853 Յուլիս 1ին կը ձեռնարկէ ներսիսեանի կից ազգական բաժինը բարեկարգելու համար: 5 դասարանի վերածելով զայն՝ առաջին երկու կարգերը կը թողու մանչերու շէնքին մէջ, իսկ Գ. Գ. եւ Ե. կարգերը կը զետեղէ զատ բաժնի մը մէջ, սահմանելով անոնց ուսման նիւթերը եւ ստանձնելով անոնց նիւթական ծախքերու հոգը¹⁰:

Ընկերութիւնը իր գոյութիւնը պահած էր տակաւին 1866ին եւ կը յիշուին իր ժրջան անգամներէն Սահակ Փեշտիմալեան «որ Ս. Ներսիսեան Ընկերութեան հիմնադրութենէն ի վեր գրեթէ միշտ անգամակից է եւ մագնիսական սքանչելի գորութեամբ մը հոն կը քաշէ բոլոր ուսումնասէր Սաստիւղցիք» եւ Գրիգոր Աղաթօնի մեծամեծ ջանքերը, բարոյական եւ նիւթական օգնութիւնները¹¹:

(Շարունակելի):

Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

⁷ Արշալոյս Արարատեան, 1845, Թ. 233:
⁸ Մասիս, 1858, Թ. 329:
⁹ Անդ, Թ. 335:
¹⁰ Մասիս, 1853, Թ. 77:
¹¹ Մասիս, 1866, Թ. 756:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ, Երիզա եւ Յիւդեաց գաւառ. պատմական համագրութիւն: Ա. հատոր (սկիզբէն մինչեւ 1375): Վեներտիկ, Ս. Ղազար, 1953, 89 մեծ, էջ 315:

Գովելի ձեռնարկութիւն մը: Յ. Ք. նպատակ ընտրած է Եկեղեաց գաւառի, յատկապէս Երզնկայ (Երզնկա) քաղաքի շուրջը եղած պատմական աղբիւրները համադրել ժամանակագրական դասակարգութեամբ, սկսեալ հնագոյն շրջանէն մինչեւ մեր օրերը: Մեր առջեւ ունինք Ա. հատորը: Ծակատին «Համագրութիւն» բառը Յառաջարանին մէջ երկիցս գրուած է «Համագրութիւն». կը կարծեմ թէ առաջինը տպագրական վրիպակ ըլլայ:

Գործը բաժնուած է երկու մասերու. Ա. մինչեւ 1000, եւ Բ. մինչեւ 1375 տարին: Աշխատութիւն մը երեսնամեայ տքնաջան պրպտումներու:

Ա. մասին մէջ ոչ միայն պատմական եւ աւանդական վկայութիւններն եւ զրոյցները համադրուած են, այլ եւ անոնց շուրջը յայտնուած կարեւոր եւ անկարեւոր, նոյն իսկ նիւթէն շեղող տեսութիւնք, որոնք ծանրաբեռնած են նոյն մասին տարրութիւնը:

Անշուշտ հաճելի պիտի ըլլար ընթերցողներուն, եթէ իրեն մուտք ներկայացուէր Եկեղեաց գաւառի համառօտ տեղագրութիւնը, սահմանները, քաղաքները, աւաններն ու գիւղերը, որքան աւանդուած են անոնք հին աղբիւրներու մէջ եւ գոյութիւն ունեցած են վերջին դարուն մէջ: Աս այս պիտի նպաստէր Հ. Հիւրժման, Հին Հայոց տեղւոյ անուններ, Վիեննա 1907, էջ 129—131:

Այսպիսի լուրջ աշխատութիւն մը կը պահանջէր խնամուած համագրութիւն մը վկայութիւններու սկզբնական աղբիւրներէ, խտրելով պատմականին եւ աւանդականին մէջ: Յ. Ք. հաւաքած է հարուստ նիւթ. բայց կարկառուն չէ ընծայած աղբիւրներն եւ անոնց հայոյ լուսարանութիւնները: Յաճախ կը տեսնենք հոս կոչումներ Հ. Մ. Չամչեանի Հայոց Պատմութենէն. բայց պատմագէտին համար կարեւոր են անոր դորձած աղբիւրները՝ ահէն առնուած:

Կը յիշէ Գրիգոր Լուսաւորչի քարոզութեան Ա. տարին 220 եւ Արխատակէսի հայբապետութեան 298—339 տարիները, բայց չէ հետեւած այս նոր ժամանակագրութեան, այլ կառչած է աւանդականին:

Բ. մասը յեցած է առաւել չափով ձեռագրական Յիշատակարաններու վրայ: Այս տեղ յիշելով 1287ի Երզնկայի երկրաշարժը կը հրատարակէ «Գերի Թորոս» տաղասացի տաղն «Ի մէջ մեղաց եմք մոլորեր...»:

Այս Թորոսը նոյնացուցած էր Յ. Ք. ԺԳ.՝ԺԳ. դարուն ծաղկած գրիչ եւ նկարիչ Տարօնեցի Թորոսի հետ (1943): Թէեւ ուշադիր ըրած էի թէ տաղս եւ տաղասացը ԺԵ. դարու կը պատկանին եւ երկրաշարժը 1458ին տեղի ունեցածն է. բայց եւ այնպէս պնդեց (Բաղմալէպ 1947) եւ կը պնդէ թէ խօսքը (Բաղմալէպ 1947) եւ կը պնդէ թէ խօսքը 1287ի երկրաշարժին կը հայի, ուստի նկարիչ Թորոսի դործն է: Ինձմէ անկախ նաեւ Հ. Աճառեան նոյն եզրակացութեան հանդէպ է (Անձնանունների Բառարան, Բ., էջ 364, Թ. 165):

ԺԳ. եւ ԺԳ. դարերուն պայծառացած են Երզնկայի գործօն եւ գիտական դէմքեր: Երբ Յովհաննէս (էջ 127—136): Քիւրտեանի ընդ Յովհաննէս (էջ 127—136): Քիւրտեանի ընդ Յովհաննէսի մեկ անձանոթ մնացած է Պր. Յովհաննէսի մէկ հատիկ գրական վաստակը՝ «Երգ ասացեալ տեառնորդայ մեծի իշխանին Յոհաննիսի Ի Ծննդեան խորհուրդս Որդւոյն Աստուծոյ»:

Տեսլիւնի անեղանելի, Բանն թանձրացեալ ի մարմնի, Էակիցն Հաւր անժամանակ փառակից Հոգւոյն...

որուն տուններու սկզբնագիրները կը կապեն Տէր. ՍԱՐԳԻՍ: Տիւրիքէն, Թ. 61, թղ. 272ա—բ. հմմտ. Finck-Gjandschezian, Verzeichniss, էջ 94: Կոստանդին Երզնկացի տաղասաց (էջ 168—224): Կիրակոս Երզնկացի (էջ 225—236): Յովհաննէս Երզնկացի—Մործորեցի, Յովհ. Պուլգ Երզնկացի (էջ 236—252): Քիւրտեան կը զանազանէ իրաւամբ 252): Քիւրտեան կը զանազանէ ինձ Յ. Մործորեցին Յ. Պուլգ Երզնկացիէն 130 մեծ ծանօթ են այս երկու հեղինակները ճշգրիտ եւ փոքր զրուածքներ. ձեռագիրները մէջ հեղինակ նշանակած են վերնագիրներու մէջ հեղինակներու անունները. հնագոյնն է Յովհ. Պուլգ Երզնկացի, կոչուած նաեւ Քաղցրիկ, աշաբրձկացի, կոչուած նաեւ Արեւելցոյ եւ աշակերտակերտ վարդան Արեւելցոյ, վախճանած կիցն Գէորգ Լամբրոնացոյ, աշակերտն 1293ին. երկրորդն է Մործորեցի, դարու անուանեալ Նչեցոյ, գործած ԺԳ. դարու անուանեալ կէսին: Յովհ. Տիւրի կոչուած է Արաբի կէսին: Յովհ. Տիւրի կոչուած է նկատել Յովհ. Տիւրի. չորրորդ անձ պէտք է նկատել Յովհ. Տիւրի:

հաննէս «Մաշաձ»: Մովսէս Երզնկացի (էջ 253—262): Գրիգորիս Երզնկացի (էջ 266—272): Միսիքար Երզնկացի (էջ 293—300): Գրիգոր Տաթեւացի Երզնկա (էջ 300—302): Գրիգոր Տաթեւացի Երզնկա (էջ 302—314): Զանացած է կազմել այս դէմքերու կենսագրութիւնն եւ անոնց երկասիրութեանց ցանկը: Ասոնք նպաստներ են գրականութեան պատմութեան համար, որոնց համար չնորհակալ կրնանք ըլլալ:

Կը մտախոհեմ հեղինակին, որ յաջողի լոյս հանել աշխատասիրութեանս Բ. հատորն ալ: Հ. Ն. Ա.

Eremya Çelebi Kömürçüyan, Istanbul Tarihi. XVII. asirda Istanbul. Tercüme ve tahsiye eden Hrand D. Andreatyan. Istanbul 1952, 80, p. XXXI + 343 + 2 համայնագրակեր Կ. Պուլգ:

Երեմիա Չէլէպի Ստամբուլայ պատմութիւնը հրատարակած էր Վ. Թորոսեան Ուսումնասիրութիւն էջերու մէջ հանդերձ ծանօթագրութիւններով, որ ապա նաեւ արտատպուեցաւ երեք հատորներով: Հ. Անտոնովսկայ ընտրելի թուրքերէն գրեական կու տայ ընտրելի թուրքերէն թարգմանութիւնը (էջ 1—65) եւ կը կցէ արտատպութիւնը (էջ 67—315) հակիրճ, բայց հմուտ եւ բազմակողմանի ծանօթագրութիւններով, որոնց ապամանի ծանօթագրութիւններու, որոնցմէ թիւնը այն աշխատութեան եւ տեղագրութեան համար (էջ 317—320): Անուանութեան համար (էջ 321—343) պիտի զիւրացնէ մասնակի գործածութիւնը: Երկու լայնածառայ համայնագրութիւնները ԺԵ. դարու Կ. Պուլգ համայնագրութիւնները կը շնորհասոյ, կը զարգարեն հատորս: Կը շնորհասոյ, կը զարգարեն հատորս: Կը շնորհասոյ, կը զարգարեն հատորս: Կը շնորհասոյ, կը զարգարեն հատորս: Հ. Ն. Ա.

ԱՐԱՄ ՍԱՀԱԿԵԱՆ, Գիցագնական Ուրփան եւ իր Հայրագիտութիւնը: Պէշուրք 1955:

Պատմական Ուղեւեցիք—Ուրփան քաղաքին նուիրուած հատորը սեղանիս վրայ է: Պր. Արամ Սահակեան ջանացած է զայն հասցնել 1915—1955ի Ապրիլեան եղեռնի եւ Ուրփայի հերոսամարտի բառասնամակի տարեկարծին (Յառաջարան, էջ 14):